

## ԿԱՐՈԼՈՍ Ա.

Մեռաւ Փրանկիսկոս Յովաէփ Ա. կայսրը, սակայն թողոց Աւտորիոյ համար արժանաւոր յաջորդ մը, Կարոլոս Ա. (կամ՝ Կարոլոս Դ. իբր թագաւոր Հունգարիոյ) 29 տարւան երիտասարդ մը, որուն շուրջը այսօր կը հրճուի Աւտորիոյ քոլոր ժողովորդը: Ծնած է 1887 Աւգոստ 17ին: Հայրն էր Ռիթոն արքիդուքսը, հանգուցեաւ կայսեր եղբօրորդին, իսկ մայրը՝ Մարիամ՝ Յովաէփայ արքիդքսուհին, ներկայ Մաքսիմի թագաւորին քոյրը: Կարոլոս Ա. մանկութեան կրթութիւնը ստացաւ մօրմէ: յետոյ զիմնազիոնը յաճախեց Շոտենցի կրօնաւորաց քով: 16 տարեկան հասակի մէջ մուանաւու գիտուրական ասպարէզ, որ մինչեւ ցայժմ՝ աստիճանէ աստիճան բարձրացած է: Ժամանակ մ’ալ յաճախած է համալսարան իրաւագիտական ճիւղին մէջ: Ժողովրդենէն այնչափ սիրուած է, որ այժմ՝ անկէ միայն գուրգուրանը կը վայելէ: 1907ին ամուսնացաւ Պարմայի եւ Բուրբոնի Ցիտա (Zita) դքսուհույն հետ: Յայսօր, ինչպէս Աւտորիոյ լրագրութիւնը զրուատեց, թէ Կայսրն եւ թէ Կայսրուհին տիպարներ են բարութեան, իմաստութեան եւ որիշ լաւ յատկութեանց: Ունին նաեւ չորս զաւակ, որոնց երեցն ու միանգամայն թանգաժառանգը՝ կ’անուանուի Փրանկիսկոս Յովաէփ Ռիթոն, որ ծնած է 1912, Նոյեմբ. 20ին: Եթէ ղժքախտ քան մը կայ այս Կայսեր համար, զոր ստիպուած ենք շեշտել, սկս է թէ իր նախորդին պէս, քաղաքական փոթորիկներու մէջ է, որ կը բարձրանայ գաճը, ըստ որում աշխարհիս ամենահզօր պետութիւնը իրեն դէմ կը կոռին եւ իր պետութիւնը անդամատել կը սպառնան, սակայն յուսով ենք, թէ ինքն ալ իր նախորդին նման՝ պիտի յաջողի այս քաղաքական փոթորիկները իր ժողովրդեան զվուն վրայէն կարծ ժամանակէն հեռացընել վերջնական յաղթութեամբ մը: Մեծ փառք արդէն իր բանակին, որ երկուք ու կէս տարիէ ի վեր կոռւելով, զիելէ շարունակ յաղթութեանց դաքնիներ ընդունած է: Իրաւունք ունինք յուսալու, թէ այն հզօր ու վերին Աջը՝ որմէ կախում ունինք ուղղո ազգաց ու պետութեանց գոյութիւնն կամ՝ չգոյութիւնն, յաղթութիւնն կամ՝ պարտութիւնն, պիտի չվերնայ Աւտորիոյ թէ ժողովրդեան, թէ քանակին եւ թէ արքունի տան վրայէն, քանի որ ասոնք անոր հովանույն տակ՝ հաւատարմութեամբ դարեր ու դարեր ապրած են: Նորընտիր Կայսրն ու Կայսրուհին հազիւ թէ գաճը բարձրացան, ահա երկրին ամէն կողմանէ, սկսեալ քաղաքական քոլոր բարձր անձնաւորութիւններէ ու մարմիններէ, մինչեւ հասարակ քաղաքացին, պատրաստութիւններ կը տեսնեն իրենց հնքնակալին ու հնքնակալուհույն ամէն հպատակութեան ու մեծարանաց ցոյցեր ընել: Եւ փոխադարձար նորընտիր արքունի զոյզ ամոնք եւս, կարծես թերի մսալ չուզելով իրենց նոր յանձն առած բարձր պարտարութեանց մէջ, ներկայ քաղաքական ու տնտեսական դժուարին օրերուն՝ կը ջանան ամէն դիւրութիւն ու հանգստութիւն մատուցանել իրենց հպատակ ժողովրդեան: Թո՛ղ յուսայ Աւտորիան, թէ յանձին իր նոր հնքնակալին երջանկազոյն օրեր պիտի տեսնէ: Մեր սրտազին մաղթանքն է. Տայ Աստուած զոյզ ամոնքներուն եւ իրենց Որդւոց երջանիկ օրեր, փառք եւ յաջողութիւն:

